

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Խորհրդի
«28» նոյեմբերի 2022թ.

Թիվ 02-Ո-22-011/03 որոշմամբ

Խորհրդի նախագահ՝

Է. Սուքիասյան



«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախագիծը	Անուն/Ազգանուն	Պաշտոն	Ամսաթիվ	Ստորագրություն
ԿԱԶՄԵՑ	Լ. Մամիկոնյան	Գործադիր տնօրենի տեղակալ	11.11.2022	
ՍՏՈՒԳԵՑԻՆ	Գ. Գյուլամբարյան	Համապատասխանության ապահովման պատասխանատու	17.11.2022	
	Հ. Ռաֆայելյան	Իրավաբանական բաժնի պետ	21.11.2022	
ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՅԵԼ	Ա. Մելքոնյան	Գործադիր տնօրեն	24.11.2022	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	2
2 ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	2
3 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ.....	6
4 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ	7
5 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ	9
6 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.....	11
7 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ	12
8 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	14
9 ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ.....	18
10ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ.....	19
11 ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒՔՐՈԳԱՑԻԱ).....	22
12ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	22
13ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ	25
14ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	28
15ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ).....	29
16ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ.....	30
Հավելված 1	30
Հավելված 2.1.....	30
Հավելված 2.2.....	31
Հավելված 3	31

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 2/31	

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ» փաստաթուղթը նպատակ է հետապնդում տալ Պայմանների կիրառման յուրաքանչյուր ոլորտի ապահովագրական օբյեկտ, ապահովագրական պատահար, ապահովագրական հատուցում և այլ հասկացությունների սահմանումը, ինչպես նաև յուրաքանչյուր ծածկույթի պարագայում կարգավորել Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսերի, չհատուցվող ծախսերի, հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի և ապահովագրական պատահարի դեպքում՝ Կողմերի գործողությունները:
- 1.2 Պայմանները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք) և այլ իրավական ակտերին (այսուհետ միասին՝ ՀՀ օրենսդրություն) համապատասխան:
- 1.3 Ընկերությունն իրականացնում է Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ՝ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններից) Օրենքով նախատեսված ոչ կյանքի ապահովագրության 1-ին դասով:
- 1.4 Սույն փաստաթուղթը համապատասխանում է ISO 9001:2015 և 27001:2013 ՈԿՀ և ՏԱԿՀ ստանդարտներին:
- 1.5 Պայմաններն ուժի մեջ է մտնում 2023թ հունվար 01-ից: Պայմանների ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են համարվում «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Խորհրդի թիվ 10 արձանագրությամբ 01.10.2009թ. հաստատված ««ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրության պայմանները»:
- 1.6 Պայմաններում փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու հաստատվում են Ընկերության խորհրդի որոշմամբ:
- 1.7 Պայմանները հրապարակային օգտագործման փաստաթուղթ է և կարող է տեղադրվել Ընկերության պաշտոնական կայքում (www.silinsurance.am):

2 ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- 2.1 Տերմիններ և հասկացություններ.
 - 2.1.1 Ընկերություն - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ:
 - 2.1.2 Պայմաններ - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ:
 - 2.1.3 Ընկերության խորհուրդ կամ խորհուրդ - Ընկերության կանոնադրության համապատասխան՝ Ընկերության բաժնետերերի կողմից ձևավորված ընդհանուր կառավարման կոլեգիալ մարմին:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 3/31	

- 2.1.4 Ընկերության գործադիր տնօրեն կամ Գործադիր տնօրեն – Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ընկերության միանձնյա գործադիր մարմին:
- 2.1.5 Որակի կառավարման համակարգ – Որակի բնագավառում Ընկերության կառավարմանը նպատակաուղղված համակարգված միջոցառումների ամբողջություն:
- 2.1.6 Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ – Տեղեկատվական հոսքերի բնագավառում Ընկերության կառավարմանը նպատակաուղղված համակարգված միջոցառումների ամբողջություն:
- 2.1.7 Որակի պատասխանատու – Ընկերության աշխատող կամ Ընկերության հետ համապատասխան ծառայության մատուցման պայմանագիր ունեցող այլ ընկերության աշխատող, որը պատասխանատու է Որակի ապահովմանն ու կառավարմանը ներկայացվող պահանջների կատարման համար:
- 2.1.8 Ապահովագրության պայմանագիր/վկայագիր (այսուհետ՝ Պայմանագիր) – Պայմանների պահանջների հիման վրա կնքված պայմանագիր՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է Ապահովադիրին կամ Շահառուին կամ վերջինիս համար ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել ապահովագրական պատահարի տեղի ունենալու ուժով պատճառված վնասը կամ դրա մի մասը (ապահովագրական հատուցում), բացառությամբ՝ Պայմաններում նախատեսված բացառությունների և չհատուցվող ծախսերի, իսկ Ապահովադիրը պարտավոր է վճարել Պայմանագրում նշված ապահովագրավճարը՝ դրանում նշված կարգով և ժամկետներում:
- 2.1.9 Ապահովագրող – «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, որն իրականացնում է ապահովագրական գործունեություն՝ համաձայն լիազորված մարմնի կողմից տրված լիցենզիայի:
- 2.1.10 Ապահովադիր – ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած կազմակերպատիրական ձևի իրավաբանական անձ, գործունակ ֆիզիկական անձ, ոչ ռեզիդենտ կազմակերպություն, որն Ապահովագրողի հետ կնքել է Պայմանագիր:
- 2.1.11 Կողմեր – Ապահովագրողն ու Ապահովադիրը միասին:
- 2.1.12 Ապահովագրված անձ – Պայմանագրում նշված ֆիզիկական անձ, որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա: Որպես Ապահովագրված անձ կարող է հանդիսանալ ցանկացած ունակ ֆիզիկական անձ, ում տարիքը Պայմանագրի կնքման պահին չի գերազանցում 65 տարեկանը (եթե այլ տարիք նախատեսված չէ Պայմանագրով): Պայմանագրով Ապահովագրված անձ չի կարող լինել անձը, ով՝

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 4/31	

- Պայմանագրի կնքման պահին տառապում է նյարդային կամ հոգեկան համակարգի ծանր ախտահարմամբ (թուլամտություն, էպիլեպսիա, նյարդային համակարգի այլ խանգարումներ),
- ունի բնածին անկանոնություններ (անոմալիաներ), ուռուցքաբանական հիվանդություններ,
- հանդիսանում է հաշմանդամ կամ ունի հաշմանդամ երեխայի կարգավիճակ,
- ՄԻԱՎ վարակակիր է կամ ՁԻԱՀ-ով հիվանդ,
- առողջական վիճակից ելնելով՝ մշտական խնամքի կամ հսկողության կարիք ունի:

2.1.13 Շահառու - Ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ:

Պայմանագրում Շահառու նշված լինելու դեպքում հատուցում ստանալու իրավունքը տրամադրվում է տվյալ անձին, իսկ մինչև Ապահովագրական պատահարի ի հայտ գալը Շահառուի մահվան դեպքում ապահովագրական հատուցում ստանալու իրավունքը տրվում է Շահառուի ժառանգներին, եթե այլ բան սահմանված չէ Պայմանագրով: Առանց Ապահովագրված անձի գրավոր համաձայնության՝ Ապահովագրված անձ չհանդիսացող Ապահովադիրը կամ երրորդ անձն ամեն դեպքում Շահառու լինել չի կարող:

Եթե Պայմանագրում այլ անձ նշված չէ որպես Շահառու, ապա Պայմանագիրը կնքված է համարվում հոգուտ Ապահովագրված անձի և հատուցում ստանալու իրավունքը տրամադրվում է վերջինիս: Ապահովագրված անձի մահվան դեպքում Շահառու են ճանաչվում Ապահովագրված անձի ժառանգները (իրավահաջորդները):

Եթե Պայմանագրով Ապահովադիր է հանդիսանում Ապահովագրված անձը, ապա վերջինս Ապահովագրողի կողմից մշակված Շահառուի քարտով՝ որպես Շահառու, կարող է նախատեսել այլ անձի: Տվյալ դեպքում հատուցում ստանալու իրավունքը տրամադրվում է Շահառուի քարտում նշված անձին:

2.1.14 Ապահովագրական ռիսկ - ապահովագրման ենթակա հնարավոր դեպք կամ իրադարձություն, որը կարող է տեղի ունենալ Պայմանագրի գործողության ընթացքում՝ կրելով հանկարծակի և պատահական բնույթ, ու կախված չէ Կողմերի կամ Ապահովագրված անձի կամ Շահառուի կամքից:

2.1.15 Ապահովագրական պատահար - Ապահովագրության տարածքում Պայմանագրի գործողության ժամկետում Պայմանագրով նախատեսված իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Շահառուին վճարել ապահովագրական հատուցում Պայմաններում և Պայմանագրում նշված կարգով՝ հաշվի առնելով դրանցում նախատեսված բացառությունները և մերժման հիմքերը:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 5/31	

- 2.1.16 Դժբախտ պատահար (կամ Պատահար) – Ապահովագրված անձի կամքից անկախ, որևիցե հիվանդության և/կամ դրա բարդության հետ կապ չունեցող կամ հիվանդության հետևանք չհանդիսացող հանկարծակի, անսպասելի, կարճաժամկետ (մինչև 24 ժամ տևողությամբ), պատահական բնույթ կրող, արտաքին, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների զուգադիպումը, որի բնույթը, տեղի ունենալու ժամանակը և վայրը միանշանակ են և հստակ, և որի հետևանքով Ապահովագրված անձին պատճառվել է մարմնական վնասվածք կամ մահ:
- 2.1.17 Սուր թունավորում – Ապահովագրված անձի օրգանիզմի կտրուկ զարգացող հիվանդագին փոփոխություններ և պաշտպանիչ ազդանշաններ, որոնք առաջացել են արտաքին միջավայրից օրգանիզմի մեջ հանկարծակի ստացված թունավոր հատկություններ ունեցող նյութերի միապահ կամ կարճաժամկետ ազդեցության հետևանքով:
- 2.1.18 Մարմնական վնասվածք – Ապահովագրված անձի կենդանի հյուսվածքների կառուցվածքի և օրգանների անատոմիական ամբողջականության խախտում, ինչը հանդիսացել է արտաքին միջավայրի ֆիզիկական (բացառությամբ էլեկտրամագնիսային և իոնացնող ճառագայթման) և քիմիական գործոնների միապահ կամ կարճաժամկետ (մինչև 24 ժամ տևողությամբ) ազդեցության արդյունք, և որը պահանջում է ամբուլատոր կամ ստացիոնար հետազոտություն և/կամ բուժում համապատասխան մասնագիտացում ունեցող բժշկի կամ բժշկական հաստատության կողմից:
- 2.1.19 Հաշմանդամություն – սոցիալական անբավարարություն՝ մարմնական վնասվածքի և/կամ թունավորման հետևանքով օրգանիզմի ֆունկցիաների հստակ խանգարումներով, որը հանգեցնում է կենսագործունեության սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության, ինչը հաստատվում է պաշտոնապես լիազորված մարմնի եզրակացությամբ՝ հաշմանդամության խմբի (կարգի) սահմանման մասին ՀՀ օրենսդրության համապատասխան: Պայմանների իմաստով հաշմանդամության խմբերը համապատասխանում են ՀՀ լիազորված մարմնի կողմից սահմանված խմբերին:
- 2.1.20 Ժամանակավոր անաշխատունակություն – այնպիսի առողջական վիճակ, երբ Ապահովագրված անձը ժամանակավորապես կորցրել է աշխատելու ունակությունը և/կամ համապատասխան աշխատանքային պայմանագրից բխող իր աշխատանքային իրավունքներն իրականացնելու և պարտականությունները կատարելու ունակությունը, որը վերականգնելի բնույթ է կրում, և միաժամանակ Ապահովագրված անձը ստանում է ամբուլատոր կամ ստացիոնար բուժում համապատասխան բժշկական հաստատությունում և չի ստանում հաշմանդամության որևէ կարգ: Ժամանակավոր անաշխատունակության փաստը պետք է հաստատվի նման իրավասություն ունեցող

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»
			S – 1.0 11.11.2022
			Էջ 6/31

բժշկական հաստատության կողմից տրված պաշտոնական փաստաթղթի հիման վրա: Մինչև 16 տարեկան Ապահովագրված անձի դեպքում Պայմանների իմաստով ժամանակավոր անաշխատունակություն չի սահմանվում:

- 2.1.21 Շտրապ (անհետաձգելի) բուժօգնություն - խորհրդատվական, ախտորոշիչ և բուժական օգնության ցուցաբերում:
- 2.1.22 Մասնագիտական հիվանդություն - հիվանդություն, որի առաջացման որոշիչ դերը պատկանում է արտադրական միջավայրի և աշխատանքային գործընթացի անբարենպաստ գործոնների ազդեցությանը: Մասնագիտական հիվանդությունների ցանկը հաստատվում է համապատասխան պետական իրավասու մարմնի կողմից:
- 2.1.23 Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում) - Պայմանագրի և Պայմանների համաձայն՝ Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում վճարման ենթակա գումար (դրամական արտահայտությամբ):
- 2.1.24 Ապահովագրական գումար - Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրական պատահարների դեպքում Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ:
- 2.1.25 Ապահովագրավճար - Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովագրողի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:
- 2.1.26 Ապահովագրական սակագին - Ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի նկատմամբ:
- 2.1.27 Ոչ պայմանական չհատուցվող գումար - Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ կամ բացարձակ մեծությամբ Պայմանագրով սահմանված գումար, որի չափով Ապահովագրողն ազատվում է հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:
- 2.1.28 Ապահովագրության տարածք - Հայաստանի Հանրապետության տարածք, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

2.2 Հապավումներ.

2.2.1 ՀՀ - Հայաստանի Հանրապետություն:

2.2.2 ՈԿՀ - ISO 9001 ստանդարտին համապատասխան Որակի կառավարման համակարգ:

2.2.3 ՏԱԿՀ - ISO 27001 ստանդարտին համապատասխան Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ:

3 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1 Ապահովագրության օբյեկտն Ապահովագրված անձի օրինական գույքային շահերն են՝ կապված Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան, հաշմանդամության, ժամանակավոր անաշխատունակության, մարմնա-

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 7/31	

կան վնասվածքների առաջացման, շտապ (անհետաձգելի) բուժօգնության ծախսեր ստանալու հետ:

4 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

- 4.1 Պայմանների իմաստով Ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրության տարածքում Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած Դժբախտ պատահարը: Դժբախտ պատահար է համարվում նաև՝
- 4.1.1 Մարմնական վնասվածքը հրդեհի, պայթյունի, այրվածքների, ցրտահարության, մարմնի գերսառեցման (բացառությամբ մրսածության), ջրահեղձման, էլեկտրական ցնցման, կայծակի հարվածի, արևահարության արդյունքում,
 - 4.1.2 Վիրավորումը, կոտորվածքը (բացառությամբ պաթոլոգիական կոտորվածքների), հոդերի տեղահանումը, ատամների տրավմատիկ վնասը, կապանների և ջլերի պատռվածքը, ներքին օրգանների և փափուկ հյուսվածքների վնասվածքը, սեղմումը,
 - 4.1.3 ուղեղի ցնցումը,
 - 4.1.4 օտար մարմնի պատահական մուտքը շնչառական ուղիներ,
 - 4.1.5 մարմնական վնասվածքը կենդանիների հարձակումներից և/կամ այլ գործողություններից,
 - 4.1.6 օձերի, սարդի, տիգի, կարիճների և միջատների խայթոցներից առաջացած անաֆիլակտիկ շոկը,
 - 4.1.7 տիգից փոխանցվող էնցեֆալիտը,
 - 4.1.8 Սուր թունավորումը միայն քիմիական նյութերով, թունավոր բույսերով և թունավոր գազերով (եթե այլ նյութ նախատեսված չէ Պայմանագրով):
 - 4.1.9 Մինչև 11 տարեկան երեխաների դեպքում՝ ցանկացած թունավորումը:
 - 4.1.10 11-18 տարեկան երեխաների դեպքում՝ Սուր թունավորումը և դեղերից հանկարծակի թունավորումը (բացառությամբ գերդոզավորման դեպքերի):
- 4.2 Պայմանների համաձայն՝ Դժբախտ պատահար չեն համարվում հիվանդությունները (այդ թվում՝ Մասնագիտական հիվանդությունները) կամ դրանց բարդացումները և/կամ հետևանքները (ինչպես նախկինում ախտորոշված, այնպես էլ առաջին անգամ հայտնաբերված), ինչպես նաև այն հիվանդությունները կամ դրանց բարդացումները, որոնք առաջացել (զարգացել) են արտաքին գործոնների ազդեցության հետևանքով, այդ թվում նաև՝ սրտամկանի ինֆարկտը, գլխուղեղի կաթվածը, անևրիզմները, օրգանների ֆունկցիոնալ անբավարարությունը, օրգանների բնածին արատները:
- 4.3 Դժբախտ պատահարը պետք է հաստատվի համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթով:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 8/31	

- 4.4 Պայմանների համաձայն Պայմանագրով կարող են ապահովագրվել հետևյալ ռիսկերը՝
- 4.4.1 Դժբախտ պատահարի հետևանքով մահ:
- 4.4.2 Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած հաշմանդամություն:
- 4.4.3 Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակություն:
- 4.4.4 Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած մարմնական վնասվածք:
- 4.4.5 Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած շտապ (անհետաձգելի) բուժօգնության ծախսեր:
- 4.5 Ապահովադիրն իրավունք ունի ընտրել ապահովագրական ռիսկը կամ ապահովագրական ռիսկերի համակցությունը վերը նշված ենթակետերից:
- 4.6 Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով կարող են սահմանվել այլ ապահովագրական ռիսկեր:
- 4.7 Եթե Պայմանների 4.4.1 կամ 4.4.2 կետերով նախատեսված Ապահովագրված անձի մահը կամ հաշմանդամության սահմանումը տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի օրվանից հետո, այն համարվում է Ապահովագրական պատահար, եթե Դժբախտ պատահարի առաջացման պահից անցել է ոչ ավել, քան տվյալ Ապահովագրված անձի գծով Պայմանագրի գործողության ժամկետին հավասար ժամկետ: Այս ժամկետը, սակայն, չի կարող պակաս լինել 3 ամսից և ավել 12 ամսից:
- 4.8 Եթե Պայմանների 4.4.3 կետով նախատեսված Ապահովագրված անձի ժամանակավոր անաշխատունակությունը սկսվել է Պայմանագրի գործողության ընթացքում և շարունակվել Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի օրվանից հետո, այն համարվում է Ապահովագրական պատահար, եթե հաստատվում է համապատասխան իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերով Դժբախտ պատահարի առաջացման պահից հետո ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում:
- 4.9 Եթե Պայմանների 4.4.4 կետով նախատեսված Ապահովագրված անձի մարմնական վնասվածքը հաստատվում է Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի օրվանից հետո, այն համարվում է Ապահովագրական պատահար, եթե մարմնական վնասվածքը արձանագրվել է համապատասխան իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերով Դժբախտ պատահարի առաջացման պահից հետո ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում:
- 4.10 «Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած շտապ (անհետաձգելի) բուժօգնության ծախսեր» ռիսկով Պատահար է համարվում Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում բժշկական հաստատություն դիմելը՝ պայմանավորված Դժբախտ պատահարի հետևանքով բժշկական օգնություն ստանալու անհրաժեշտությամբ:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 9/31	

4.11 Պայմանների 4.7-4.9 կետերով նախատեսված պահանջները կիրառելի չէ Պայմանների 7-րդ գլխով նախատեսված վաղաժամկետ դադարեցված (մասնակի և ամբողջական) Պայմանագրերի գծով:

5 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

- 5.1 Ապահովագրական գումարը կարող է սահմանված լինել տվյալ Ապահովագրված անձի համար ընտրված բոլոր ապահովագրական ռիսկերի գծով ընդհանուր գումարի ձևով կամ այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով առանձին սահմանված գումարների ձևով, ինչը պետք է նշված լինի Պայմանագրում:
- 5.2 Յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար ապահովագրական գումարը սահմանվում է Կողմերի համաձայնությամբ և նշվում է Պայմանագրում: Մի քանի անձանց օգտին կնքված Պայմանագրով յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար ապահովագրական գումարի չափը (անհրաժեշտության դեպքում՝ յուրաքանչյուր ռիսկի գծով առանձին) նշվում է առանձին՝ Պայմանագրում և/կամ դրան կից հավելվածներում:
- 5.3 Ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովագրական հատուցման գումարը հաշվարկելիս յուրաքանչյուր հատուցման ժամանակ հիմք է ընդունվում Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը՝ հաշվի առնելով, որ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների գծով հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար սահմանված ապահովագրական գումարը:
- 5.4 Յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար հատուցման ընդհանուր գումարը բոլոր Ապահովագրական պատահարների գծով չպետք է գերազանցի յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը: Ապահովագրված անձի ապահովագրական ամբողջ գումարի վճարման դեպքում Պայմանագիրը հատուցում ստացած անձի նկատմամբ համարվում է ավարտված:
- 5.5 Ապահովագրողը Պայմանագրին կից հավելվածի կնքման միջոցով կարող է մեծացնել կամ վերականգնել (հատուցված գումարի չափով) Ապահովագրական գումարը, եթե Ապահովագիրը վճարի համապատասխան ապահովագրավճար:
- 5.6 Պայմանագրով կարող են նախատեսվել Ապահովագրական հատուցման առավելագույն ենթասահմանաչափեր:
- 5.7 Պայմանների 4.4.1 կետով նախատեսված մահ առաջանալու դեպքում Շահառուին հատուցումը տրամադրվում է Հավելված 1-ում նշված սահմանաչափով:
- 5.8 Պայմանների 4.4.2 կետով նախատեսված հաշմանդամություն առաջանալու դեպքում Շահառուին հատուցումը տրամադրվում է Հավելված 2.1-ում կամ

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ	Կողմ / 09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
		S – 1.0	11.11.2022
		Էջ 10/31	

Հավելված 2.2-ում նշված սահմանաչափերով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

- 5.9 Պայմանների 4.4.3 կետով նախատեսված ժամանակավոր անաշխատունակություն առաջանալու դեպքում Շահառուին հատուցումը տրամադրվում է բուժման յուրաքանչյուր օրվա համար Ապահովագրական գումարի 0,4%-ի չափով՝ Պատահարը տեղի ունենալուց հետո 4-րդ օրվանից սկսած (չհատուցվող ժամանակահատված՝ Պատահարը տեղի ունենալիս առաջին 3 օրը) առավելագույնը 90 օրվա համար, բայց ոչ ավել, քան ընդհանուր 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի համար, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Նույն Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի՝ տարբեր ժամանակահատվածներում ժամանակավոր անաշխատունակությունը դիտվում է որպես մեկ Ապահովագրական պատահար: Մինչև 16 տարեկան ապահովագրված անձանց դեպքում ժամանակավոր անաշխատունակության մասով վնասի հատուցում չի իրականացվում:
- 5.10 Պայմանների 4.4.4 կետով նախատեսված մարմնական վնասվածքներ առաջանալու դեպքում Շահառուին հատուցումը տրամադրվում է Հավելված 3-ում նշված սահմանաչափերով:
- 5.11 Պայմանների 4.4.5 կետով նախատեսված շտապ (անհետաձգելի) բուժօգնության ծախսեր առաջանալու դեպքում Շահառուին տրամադրվում է հատուցում առավելագույնը 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
- 5.12 Եթե Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի ստացած մարմնական վնասվածքը հանգեցրել է Ապահովագրված անձի հաշմանդամության, ապա Շահառուին հատուցումը տրվում է Հավելված 2.1-ով (կամ Հավելված 2.2-ով) և Հավելված 3-ով նախատեսված հատուցման սահմանաչափերից առավելագույն սահմանաչափով: Եթե Ապահովագրված անձի ստացած մարմնական վնասվածքի համար արդեն իսկ տրամադրվել է հատուցում, ապա հաշմանդամության սահմանման ժամանակ հատուցվում է միայն դրական տարբերությունը (առկայության դեպքում):
- 5.13 Եթե Ապահովագրված անձի հետ մեկ Ապահովագրական պատահարի հետևանքով տեղի ունեցած Պայմաններով սահմանված դեպքերին հաջորդել է Ապահովագրված անձի մահը, ապա վերջինիս համար իրականացվող հատուցման չափից նվազեցվում են տվյալ Ապահովագրական պատահարի համար արդեն իսկ իրականացված ապահովագրական հատուցումները:
- 5.14 Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, ապա Դժբախտ պատահարի հետևանքով հաշմանդամության առաջացման դեպքում ապահովագրական հատուցումը Պայմանագրի շրջանակներում կատարվում է մեկ անգամ և հաշվի չի

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 11/31	

առնվում հաշմանդամության կարգի հնարավոր փոփոխությունը Պայմանագրի գործողության ընթացքում:

- 5.15 Պայմանագրով կարող է նախատեսվել ոչ պայմանական չհատուցվող գումար՝ դրամական արտահայտությամբ կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:
- 5.16 Ապահովագրավճարի չափը սահմանվում է Պայմանագրով՝ ֆիքսված գումարի չափով կամ Ապահովագրական գումարի նկատմամբ կիրառելով համապատասխան ապահովագրական սակագին, որի չափը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից:
- 5.17 Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական սակագների նկատմամբ կիրառել կարգավորիչ գործակիցներ (ավելացնել/նվազեցնել)՝ կախված Ապահովադրի կողմից ընտրված ռիսկից, Ապահովագրված անձի տարիքից, սեռից, մասնագիտությունից, աշխատանքի բնույթից, առողջական վիճակից, ապահովագրության տարածքից, կենցաղային պայմաններից, Պայմանագրի գործողության ժամկետից և այլ հանգամանքներից, որոնք կարող են ազդել ռիսկի աստիճանի վրա:
- 5.18 Ապահովագրավճարը Կողմերի համաձայնությամբ կարող է վճարվել միանվագ կամ տարաժամկետ կարգով, որի վճարման չափը, կարգն ու ժամկետները սահմանվում են Պայմանագրով:
- 5.19 Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 14 օրվա ընթացքում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը սույն կետով սահմանված ժամկետին հաջորդող 5-րդ օրվանից սկսած (եթե Պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ):
- 5.20 Եթե Պայմանագրով նախատեսվել է ապահովագրավճարի տարաժամկետ վճարման պարտավորություն, և հատուցում տրամադրելու օրվա դրությամբ ապահովագրավճարն ամբողջությամբ կամ դրա հերթական մասը վճարված չէ, ապա Ապահովագրողը հատուցվող գումարը կարող է նվազեցնել չվճարված ամբողջ ապահովագրավճարի չափով՝ անկախ Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի վճարման ժամկետներից:

6 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- 6.1 Պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովագրողի կողմից տրամադրված և Ապահովադրի կողմից լրացված դիմում-հարցաթերթիկը կամ նրա բանավոր հայտը՝ հետևյալ տվյալներով.
- 6.1.1 Ֆիզիկական անձ Ապահովադրի և Ապահովագրված անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման և մշտա-

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 12/31	

կան բնակության վայրի հասցեները (դրանց տարբերության դեպքում), հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, անձնագրային կամ նույնականացման քարտի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, բանկային հաշվեհամարը:

- 6.1.2 Իրավաբանական անձի դեպքում՝ Ապահովադրի անվանումը, պետական ռեգիստրի գրանցման համարը, ՀՎՀՀ-ն, իրավաբանական և փաստացի գործունեության հասցեները (դրանց տարբերության դեպքում), հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և բանկային հաշվեհամարը:
- 6.1.3 Պահանջվող Ապահովագրության ռիսկերը:
- 6.2 Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, երկու օրինակից, անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել ավել օրինակներից, որոնք ստորագրում են Կողմերը:
- 6.3 Պայմանագիրը կարող է կնքվել նաև Ապահովագրողի կողմից ստեղծված առցանց էլեկտրոնային հավելվածի միջոցով, որն ունի նույն իրավաբանական ուժը, ինչ Կողմերի կողմից ձեռագիր ստորագրված Պայմանագիրը:
- 6.4 Պայմանագրի անբաժանելի մասն են կազմում Պայմանները: Պայմանագրին կից կարող են թողարկվել վկայագրեր, հավելվածներ, որոնք նույնպես հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:
- 6.5 Պայմանագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի կամ Ապահովագրված անձի դիմումի հիման վրա 3 աշխատանքային օրվա ընթացքում վերջին(ներ)իս տրամադրում է Պայմանագրի կրկնօրինակը:
- 6.6 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կողմից ապահովագրավճարն ամբողջությամբ վճարելու պահից, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

- 7.1 Պայմանագիրը դադարում է.
- 7.1.1 եթե ավարտվել է Պայմանագրի գործողության ժամկետը,
- 7.1.2 եթե բացակայում է ապահովագրության օբյեկտը կամ վերացել է ապահովագրական ռիսկը,
- 7.1.3 եթե մահացել է Ապահովագրված անձը,
- 7.1.4 եթե լուծարվել է իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադիրը, բացառությամբ այն դեպքերի, երբ Շահառուն այլ անձ է,
- 7.1.5 եթե Ապահովագրողը կատարել է Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կամ Շահառուի հանդեպ իր պարտականությունները ամբողջ ծավալով,
- 7.1.6 եթե առկա է Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությունը,

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 13/31	

- 7.1.7 Ապահովադրի կամ Ապահովագրողի նախաձեռնությամբ՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով մյուս Կողմին՝ պայմանով, որ հրաժարման պահին Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը չի վերացել: Եթե Պայմանագիրը կնքվել է մեկ տարուց պակաս ժամկետով, ապա ծանուցման ժամկետը կազմում է 5 օր,
- 7.1.8 Ապահովադրի կամ Ապահովագրողի նախաձեռնությամբ, եթե մյուս Կողմը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում,
- 7.1.9 Պայմանագրով, Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 7.2 Պայմանների 7.1.1 և 7.1.5 կետերով նախատեսված հիմքերով Պայմանագիրը դադարելու դեպքում Ապահովադրին ապահովագրավճար չի վերադարձվում:
- 7.3 Պայմանների 7.1.2, 7.1.3, 7.1.4 և 7.1.7 (Ապահովագրողի նախաձեռնության դեպքում) կետերով նախատեսված հիմքերով Պայմանագիրը դադարելու դեպքում Ապահովադրին վերադարձվում է Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը, եթե Պայմանագրից հրաժարվելու պահին ապահովագրական որևէ պատահար չի գրանցվել կամ հայց չի ներկայացվել:
- 7.4 Պայմանների 7.1.6 և 7.1.7 (Ապահովադրի նախաձեռնության դեպքում) կետերով նախատեսված հիմքերով Պայմանագիրը դադարելու դեպքում Ապահովադրին վերադարձվում է ապահովագրավճարը՝ համաձայն ստորև նշված բանաձևի՝
- $$Ա_v = 0,8 * Ա_{\eta} * \frac{\Gamma_2}{\Gamma} - Հ,$$
- որտեղ՝
- Ա_v - Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճար,
 - Ա_η - Պայմանագրով սահմանված ապահովագրավճար,
 - Γ₂ - Պայմանագրի գործողության չլրացած օրերի քանակ,
 - Γ - Պայմանագրի գործողության օրերի քանակ,
 - Հ - Ապահովադրին վճարված կամ հաշվարկված, բայց դեռևս չվճարված հատուցումների գումար:
- 7.5 Պայմանագիրը Ապահովադրի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում, եթե այն պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու և/կամ խախտելու հանգամանքով, ապա չկատարման և/կամ խախտման փաստն Ապահովադրի կողմից ապացուցվելու դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ստացված ապահովագրավճարների և վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը: Խախտման փաստն Ապահովադրի կողմից չապացուցվելու դեպքում կիրառվում է Պայմանների 7.4 կետով նախատեսված պահանջները:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 14/31	

7.6 Պայմանագիրը Ապահովագրողի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում, եթե այն պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու և/կամ խախտելու հանգամանքով, ապահովագրավճարը չի վերադարձվում:

8 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Ապահովագիրն իրավունք ունի՝

- 8.1.1 Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի միջոցով:
- 8.1.2 Ապահովագրողից պահանջել ապահովագրական գործունեությունը հավաստող փաստաթղթեր (գործունեության լիցենզիա և այլն):
- 8.1.3 Պայմանագրով և Պայմաններով սահմանված կարգով ստանալ ապահովագրական հատուցում:
- 8.1.4 Վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ Պայմաններով սահմանված կարգով:
- 8.1.5 Պայմանագրի շրջանակներում յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին և 20-ին ապահովագրության ներկայացնել լրացուցիչ անձանց՝ վերջիններիս համար ապահովագրավճար վճարելով՝ Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համամասնությամբ: Լրացուցիչ անձանց ապահովագրելու մասին դիմումը ներկայացվում է ոչ պակաս, քան նշված ամսաթվերից երեք աշխատանքային օր առաջ:
- 8.1.6 Պայմանագրի շրջանակներում յուրաքանչյուր ամսվա 1-ից, 10-ից և 20-ից Պայմանագրից հանել Ապահովագրված անձանց՝ Ապահովագրողին համապատասխան դիմում ներկայացնելով նշված ամսաթվերից ոչ պակաս, քան երեք աշխատանքային օր առաջ: Ապահովագրավճարի մասնակի վերադարձի հաշվարկն իրականացվում է վճարված ապահովագրավճարի՝ Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի նկատմամբ համապատասխան համամասնությամբ:
- 8.1.7 Պայմանագրի կորստի, ոչնչացման դեպքում ստանալ վերջինիս կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը՝ «Բնօրինակի հետ նույնն է» մակագրությամբ:
- 8.1.8 Իր և Ապահովագրողի միջև ծագած տարաձայնությունների/վեճերի դեպքում դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

8.2 Ապահովագիրը պարտավոր է՝

- 8.2.1 Վճարել ապահովագրավճարը Պայմանագրում նշված ժամկետներում և կարգով:
- 8.2.2 Պայմանագրի կնքման պահին և գործողության ընթացքում Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 15/31	

նշանակություն ունեցող և ապահովագրության օբյեկտի ռիսկայնությունը մեծացնող՝ իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը:

- 8.2.3 Ապահովագրողին հայտնել այլ պայմանագրերով իր և/կամ Ապահովագրված անձի ապահովագրված լինելու մասին:
- 8.2.4 Ապահովագրված անձին (անձանց) ծանոթացնել Պայմանագրի և Պայմանների դրույթների հետ: Նշված պարտավորությունը չկատարելու դեպքում դրա բացասական հետևանքները, այդ թվում՝ ֆինանսական, կրում է Ապահովագրողը:
- 8.2.5 Սեփական պատասխանատվության և իրավասության շրջանակներում կիրառել ապահովագրական ռիսկի մեծացմանը բերող հանգամանքները վերացնելուն ուղղված ողջամիտ միջոցներ:
- 8.2.6 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրով և Պայմաններով նախատեսված կարգով և ժամկետներում պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին:
- 8.2.7 Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են պատահարի պատճառների և/կամ վնասի չափի հիմնավորման համար:
- 8.2.8 Պատշաճ կերպով կատարել Պայմանագրով և Պայմաններով ստանձնած իր պարտականությունները:
- 8.3 Ապահովագրված անձը պարտավոր է՝
- 8.3.1 ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ Ապահովագրական պատահարի առաջացումը կանխելու կամ առաջանալու դեպքում հետևանքները մեղմացնելու/նվազեցնելու համար:
- 8.3.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրով և Պայմաններով նախատեսված կարգով և ժամկետներում պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին:
- 8.3.3 Ապահովագրողի միջոցների հաշվին նշանակված բժշկական քննությունը և/կամ զննումը անցնել Ապահովագրողի կողմից ընտրված բժշկական հաստատությունում:
- 8.3.4 Պատշաճ կերպով կատարել Պայմանագրով և Պայմաններով ստանձնած իր պարտականությունները:
- 8.4 Ապահովագրողն իրավունք ունի՝
- 8.4.1 ստուգել Ապահովագրի և/կամ Ապահովագրված անձի և/կամ Շահառուի կողմից տրամադրված տեղեկությունների և տվյալների արժանահավատությունը իրեն հասանելի ցանկացած միջոցներով, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 16/31	

- 8.4.2 Ապահովադրի կողմից Պայմանագրի պայմանների ոչ պատշաճ կատարման, չկատարման կամ խախտման դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ առնվազն երկու աշխատանքային օր առաջ դրա մասին ծանուցելով Ապահովադրին:
- 8.4.3 Պայմանագրին կից հավելվածներ կնքելիս, անհրաժեշտության դեպքում, Ապահովադրից պահանջել լրացուցիչ ապահովագրավճար՝ հավելվածում հաշվարկված գումարի չափով:
- 8.4.4 Ապահովագրական դիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկանալուց հետո Ապահովադրից պահանջել վճարելու դիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար: Նշված պահանջն Ապահովադրի կողմից չկատարվելու դեպքում Ապահովագրողը կիրառում է Պայմանների 7.1.7 կետով նախատեսված իրավական հետևանքը:
- 8.4.5 Ապահովագրական պատահարի հանգամանքները հետաքննելու և պարզելու համար լրացուցիչ տեղեկություններ պահանջել Ապահովադրից, Ապահովագրված անձից, Շահառուից կամ ինքնուրույն հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին, բժշկական հաստատություններին և այլ կազմակերպություններին, որոնք տիրապետում են Ապահովագրական պատահարի մասին տեղեկատվությանը, ինչպես նաև ինքնուրույն պարզել Ապահովագրական պատահարի առաջացման պատճառներն ու հանգամանքները:
- 8.4.6 չպահանջել անաշխատունակության թերթիկ (ժամանակավոր անաշխատունակության դեպքում), և հատուցման որոշումը կայացնել միայն անձի ստացիոնար բուժման վերաբերյալ բժշկական փաստաթղթի հիման վրա:
- 8.4.7 վերջնական որոշում կայացնելու համար հատուցման դիմում ներկայացնող անձից պահանջել անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր, ինչպես նաև անձամբ հետաքննել Ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավել այլ անձանց:
- 8.4.8 կասեցնել ապահովագրական հատուցման գործընթացը, այդ թվում՝ ապահովագրական հատուցման որոշման կայացման ժամկետները՝ նշված որոշման համար անհրաժեշտ հավելյալ տեղեկություններ ստանալու, Ապահովադրի կողմից ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ բժշկական փաստաթղթերի, հաշմանդամության կարգի նշանակման որոշումների) արժանահավատությունը, իսկությունը կամ վավերականությունը ստուգելու, ՀՀ օրենսդրությամբ ու Պայմաններով սահմանված դեպքերում այլ գործողություններ իրականացնելու նպատակով:
- 8.4.9 Ապահովադրի կողմից ապահովագրավճարը Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով չվճարելու դեպքում սահմանված ժամկետին հաջորդող 5-րդ օրվանից սկսած (եթե Պայմանագրով այլ ժամկետ

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 17/31	

սահմանված չէ) միակողմանի լուծել Պայմանագիրը՝ առանց Ապահովագրին նախապես ծանուցելու:

- 8.4.10 միակողմանի վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը (առանձին Ապահովագրված անձի մասով), եթե Պայմանագիրը կնքելուց հետո պարզվել է, որ վերոնշյալ Ապահովագրված անձը ընգրկված է 2.1.12 կետով նշված խմբերից որևէ մեկում:
- 8.4.11 Ապահովագրից պահանջել տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասի չափի կանխորոշման վրա, ինչպես նաև այլ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման և Պայմանագրի կնքման համար:
- 8.4.12 Դժբախտ պատահարի և դրա հետևանքների միջև պատճառահետևանքային կապը պարզելու, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելու նպատակով իր հաշվին նշանակել պատահարի լրացուցիչ փորձաքննություն, Ապահովագրված անձի կրկնակի բժշկական քննություն և (կամ) գննում:
- 8.4.13 իրականացնել Պայմաններով նախատեսված այլ գործողություններ:
- 8.5 Ապահովագրողը պարտավոր է՝
- 8.5.1 Նախապես տրամադրել Պայմանները Ապահովագրին՝ ծանոթանալու համար:
- 8.5.2 Պայմանագիրը կնքելիս Պայմանագրի և Պայմանների մեկական օրինակ տրամադրել Ապահովագրին և այդ մասին նշում կատարել Պայմանագրում:
- 8.5.3 Երրորդ անձանց չտրամադրել տեղեկություններ Ապահովագրի և Ապահովագրված անձանց մասին, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
- 8.5.4 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով կատարել ապահովագրական հատուցման վճարում:
- 8.6 Կողմերը, Ապահովագրված անձը և Շահառուն պարտավոր են չիրապարակել, չբացահայտել և/կամ երրորդ անձանց չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և/կամ պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և/կամ երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 18/31	

9 ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- 9.1 Պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը և/կամ Ապահովագրված անձը (նրա իրավահաջորդը) պարտավոր են՝
- 9.1.1 պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին Պայմանագրում նշված կապի միջոցներով՝
- 9.1.1.1 պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում՝ պատահարի օրվանից հետո 30 օրվա ընթացքում,
- 9.1.1.2 սույն կետի 9.1.1.1 ենթակետով չնախատեսված դեպքերում՝ պատահարի պահից 48 ժամվա ընթացքում:
- 9.1.2 Կախված պատահարի բնույթից՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք ժամվա ընթացքում հայտնել համապատասխան իրավասու մարմին (մարմիններին) (ոստիկանություն, 911 ծառայություն, իրավապահ մարմիններ և այլն):
- 9.1.3 աշխատանքի վայրում տեղի ունեցած Դժբախտ պատահարի դեպքում՝ անմիջապես հայտնել գործատուին (գործատուի աշխատողների անվտանգության և առողջության հարցերով ծառայությանը, իր ստորաբաժանման ղեկավարին կամ գործատուի այլ պատասխանատու ստորաբաժանման):
- 9.1.4 հնարավորության սահմաններում իրականացնել գործողություններ՝ պատահարի մասնակից այլ կողմերի և վկաների (առկայության դեպքում) ինքնությունը (անուն, ազգանուն, հասցե, հեռախոսահամար և այլն) պարզելու նպատակով:
- 9.1.5 Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը:
- 9.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը և նրա շահերը ներկայացնող անձը պարտավոր են գործել Ապահովագրողի և/կամ պատահարի գծով ծառայություն մատուցող ցանկացած անձի հրահանգների/կարգադրությունների և/կամ ցուցումների համաձայն:
- 9.3 Պայմանների 9.1.1.1 և 9.1.1.2 ենթակետերով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցում, եթե Ապահովագրողը կամ Ապահովագրված անձը կամ Շահառուն չապացուցի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին, կամ որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել Ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտավորության վրա, կամ եթե Ապահովագրված անձը եղել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կողմ /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 19/31	

կում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին պատահարի մասին տեղեկացնելը: Վերջին դեպքում Ապահովագրողը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է դա անել անհնարին դարձնող հանգամանքների վերացումից անմիջապես հետո: Ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում դիմելու անհնարինության ապացուցման պարտականությունը կրում է Ապահովագրողը կամ Ապահովագրված անձը կամ Շահառուն:

9.4 Պայմանների 8.2. և 8.3 կետերով (այդ կետերի բոլոր ենթակետերով), 9-րդ, 10-րդ, 13-րդ գլուխներով և Պայմանագրով սահմանված ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ և/կամ ՉԿԱՏԱՐՈՒՄԸ կարող է հիմք հանդիսանալ ապահովագրական ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ համար:

10 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

- 10.1 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Պատահարը տեղի ունենալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում Շահառուն պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.
- 10.1.1 Շահառուի կողմից գրավոր դիմում (Ապահովագրողի կողմից սահմանված ձևով)՝ հատուցում ստանալու վերաբերյալ,
 - 10.1.2 Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի կողմից պահանջվելու դեպքում),
 - 10.1.3 Շահառուի անձը հաստատող փաստաթուղթը, սոցիալական քարտը կամ ՀԾՀ հատկացնելու մասին տեղեկանքը (առկայության դեպքում) (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը),
 - 10.1.4 Ապահովագրված անձի օրգանիզմում ալկոհոլի, թմրադեղերի և հոգեմետ այլ նյութերի բացակայության մասին փաստաթուղթ՝ հաստատված իրավասու մարմնի կողմից (Ապահովագրողի կողմից պահանջվելու դեպքում),
 - 10.1.5 Ապահովագրված անձի գործատուի կողմից Դժբախտ պատահարի վերաբերյալ ակտ (արտադրական դժբախտ դեպքի մասին ակտ) աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում ստացած մարմնական վնասվածքի (տրավմայի) դեպքում,
 - 10.1.6 Դժբախտ պատահարում մեղավոր կողմի առկայության դեպքում՝ մեղավորի վերաբերյալ տվյալներ,
 - 10.1.7 Իրավասու մարմնի կողմից Դժբախտ պատահարի արձանագրությունը և տվյալ պատահարին առնչվող այլ փաստաթղթեր (Ապահովագրողի պահանջով),

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 20/31	

- 10.1.8 բժշկական տեղեկանք և/կամ խորհրդատվության թերթիկ և/կամ քաղվածք ամբուլատոր քարտից և/կամ էպիկրիզ և այլ բժշկական փաստաթղթեր,
- 10.1.9 շտապ (անհետաձգելի) բուժօգնության համար կատարված վնարումները հավաստող փաստաթղթեր,
- 10.1.10 անաշխատունակության թերթիկ (ժամանակավոր անաշխատունակության դեպքում)՝ բացառությամբ Պայմանների 8.4.6 կետով նախատեսված դեպքերի,
- 10.1.11 բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների կողմից Ապահովագրված անձին հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ որոշումը/տեղեկանքը (հաշմանդամության խումբ/կարգավիճակ ստանալու դեպքում),
- 10.1.12 Ապահովագրված անձի մահվան վկայականը (Ապահովագրված անձի մահվան դեպքում),
- 10.1.13 Ապահովագրված անձի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը (Ապահովագրված անձի մահվան դեպքում),
- 10.1.14 Նոտարի կողմից հաստատված ժառանգության իրավունքը հաստատող փաստաթուղթը (Ապահովագրված անձի մահվան դեպքում), բացառությամբ եթե Պայմանագրում նշված Շահառուն է օգտվում հատուցման իրավունքից,
- 10.1.15 Ապահովագրողի պահանջով այլ անհրաժեշտ փաստաթղթեր:
- 10.2 Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և/կամ չափի հիմնավորման համար:
- 10.3 Շահառուի կողմից փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու մասին գրավոր միջնորդություն ներկայացվելու դեպքում Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել ևս 6 (վեց) ամիս ժամկետով կամ մինչև Ապահովագրված անձի երկարատև բուժման ավարտը:
- 10.4 Շահառուի կողմից հատուցման դիմումին կից, Պայմաններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը կայացնում է ապահովագրական հայցը բավարարելու կամ մերժելու մասին որոշում (բացառությամբ Պայմանների 8.4.8 կետի)՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով/ծանուցելով սույն կետում նշված դիմումը ներկայացրած անձին (Շահառուին):
- 10.5 Հետաքննություն, զննումներ և փորձաքննություններ պահանջող, ինչպես նաև բժշկական հաստատություններից, դատական և/կամ այլ իրավասու մարմիններից լրացուցիչ տեղեկությունների ստացում պահանջող հանգամանքների

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 21/31	

առկայության դեպքում Ապահովագրական հատուցման որոշման կայացման ժամկետները կասեցվում են մինչև հետաքննության ավարտը և/կամ նշված տեղեկությունների ստացումը, ինչի մասին Ապահովագրողը դիմողին ուղարկում է համապատասխան ծանուցում:

- 10.6 Եթե պատահարի գծով առկա է քաղաքացիական, քրեական, դատական կարգով վարչական գործ կամ նույն պատահարի գծով Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվող գործ, և ապահովագրական հատուցման վճարումը կախված է այդ գործի ելքից, ապա հատուցման որոշման կայացման և/կամ հատուցման վճարման ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը կամ մինչև Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից որոշում կայացնելու և այն կողմերի համար պարտադիր դառնալու օրը:
- 10.7 Ապահովագրական հայցը բավարարելու մասին որոշման կայացման դեպքում Ապահովագրողը 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Ապահովագրական հատուցման վճարում:
- 10.8 Պայմաններով սահմանված ժամկետում Շահառուի կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացվելու կամ Պայմաններով սահմանված ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացվելու դեպքում՝ Ապահովագրողը, Պայմաններով սահմանված ժամկետը լրանալուց հետո, կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը:
- 10.9 Ապահովագրողը (Ապահովագրված անձը (նրա իրավահաջորդը), Շահառուն) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ պատճենների) իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:
- 10.10 Բոլոր ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն կնիքով կամ դրոշմակնիքով կամ ֆիրմային ձևաթղթի վրա (հակառակ դեպքում շտապ (անհետաձգելի) բուժօգնության ծախսերի ժամանակ պետք է ներկայացվեն բուժող բժշկի անունը, ազգանունը և հեռախոսահամարը և/կամ էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև այն բժշկական հաստատության հասցեն և հեռախոսահամարը և/կամ էլեկտրոնային փոստի հասցեն, որտեղ Ապահովագրված անձը ստացել է Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասվածքի և/կամ հիվանդության համար բուժումը):
- 10.11 Ապահովագրողը (Ապահովագրված անձը, նրանց իրավահաջորդը, Շահառուն) պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած այլ գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է ներկայացնի անմիջապես Ապահովագրողին:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 22/31	

10.12 Եթե Պայմանագրով նախատեսվում է ապահովագրական հատուցման վճարում մի քանի Շահառուների, ապա Հատուցումը նրանց վճարվում է Պայմանագրով նախատեսված մասնաբաժիններով: Եթե Պայմանագրով ապահովագրական հատուցման՝ Շահառուներից յուրաքանչյուրին վճարման ենթակա մասնաբաժինների չափը սահմանված չէ, ապա Հատուցումը Շահառուներին վճարվում է հավասար մասնաբաժիններով:

11 ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

- 11.1 Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովագրված անձին պատճառված վնասից բխող Ապահովագրված անձի (Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի (անձանց) նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:
- 11.2 Ապահովագրված անձը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողին պահանջի փոխանցման (սուբրոգացիայի) իրավունքը կիրառելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Եթե Ապահովագրողը (Ապահովագրված անձը (նրա իրավահաջորդը), Շահառուն) խոչընդոտել է Ապահովագրողի հետադարձ պահանջի իրավունքի իրացմանը կամ գրավոր ձևով հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքի փոխանցման կիրառումից կամ այդ իրավունքը կիրառելն անհնարին է դարձել Ապահովագրողի (Ապահովագրված անձի (նրա իրավահաջորդի), Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողն ամբողջությամբ կամ համապատասխան մասով ազատվում է Ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից կամ իրավունք ունի պահանջելու վերադարձնել արդեն իսկ վճարված հատուցման գումարը:
- 11.3 Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովագրողի (Ապահովագրված անձի) և վնասների համար պատասխանատու անձի (անձանց) միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

12 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 12.1 Պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց, եթե
- 12.1.1 Պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի շնչառական և մարսողական համակարգեր սնունդ, կոշտ նյութեր ներթափանցելու հետևանքով, բացառությամբ հանկարծակի Սուր թունավորումների:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 23/31	

- 12.1.2 Պատահարն առաջացել է միջուկային պայթյունի, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական կամ ռադիոակտիվ վարակման ներգործության, զանգվածային անկարգության, խռովության, հեղափոխության, գործադուլի, ապստամբության, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, պատերազմի, զորաշարժերի, զորավարժության կամ այլ ռազմական գործողության հետևանքով, բացառությամբ եթե Դժբախտ պատահարը տեղի է ունեցել Պայմանագրով նախատեսված ՀՀ-ից տարբերվող Ապահովագրության տարածք համարվող այլ երկրներում վերոնշյալ գործողությունների սկսվելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում:
- 12.1.3 Ապահովագրված անձը պատահարի ժամանակ եղել է ավիոհովի, թմրանյութերի, տոքսիկ նյութերի կամ ցանկացած այլ տեսակի հոգեմետ միջոցների ազդեցության ներքո:
- 12.1.4 Ապահովագրված անձը չի պահպանել վարակիչ հիվանդությունների պրոֆիլակտիկայի և սանիտարահամաճարակային նորմերի և կանոնների պահանջները:
- 12.1.5 Պատահարը տեղի է ունեցել բնական և/կամ տարերային աղետների/վտանգների, հնարավոր այլ արտակարգ իրավիճակների (այդ թվում պետական մարմինների կողմից հայտարարված) հետևանքով, համաճարակների պատճառով:
- 12.1.6 Պատահարը հանդիսանում է բնածին հիվանդությունների և/կամ վիճակների, ներառյալ՝ ներարգանդային զարգացման ընթացքում ձևավորվող արատների և/կամ անոմալիաների, անատոմիական առանձնահատկությունների, դեֆորմացիաների, ժառանգական և գենետիկ հիվանդությունների դրսևորում և/կամ հետևանք:
- 12.1.7 Պատահարն առաջացել է Ապահովագրված անձի կողմից վիրտուալ հարթակների կիրառման հետևանքով:
- 12.1.8 Պատահարն առաջացել է Ապահովագրված անձի՝ ցանկացած տեսակի պրոֆեսիոնալ սպորտաձևով զբաղվելու, այդ թվում՝ մրցումներին, մարզումներին և/կամ սպորտային ցանկացած միջոցառումներին մասնակցելու արդյունքում:
- 12.1.9 Պատահարն առաջացել է Ապահովագրված անձի՝ որպես հոբբի և/կամ որպես ժամանց և/կամ սիրողական հիմունքներով վտանգավոր և/կամ էքստրեմալ սպորտաձևով զբաղվելու և/կամ ցուցադրումների մասնակցելու արդյունքում՝ անկախ զբաղվելու եղանակից և/կամ ձևից (սպորտային ակումբներ, խմբակներ, միություններ, ֆեդերացիաներ, ասոցիացիաներ՝ մշտական կամ պարբերական այցելությամբ), այդ թվում՝
- 12.1.9.1 լեռնային տուրիզմ (ալպինիզմ), սպորտային տուրիզմ, լեռնագնացություն, քարանձավային արշավ, ժայռամագլցում, սպելեոտուրիզմ, սառցե

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 24/31	

մագլցում, սնոուբորդինգ, լեռնադահուկային սպորտ, լեռնային հեծանվավազք:

- 12.1.9.2 ուժային մարտարվեստի և/կամ ձեռնամարտի և/կամ ըմբշամարտի բոլոր տեսակներ, այդ թվում՝ բռնցքամարտ, կարատե, քիքբոքսինգ, ուշու, սամբո, ջիուջիթսա, թեկվանդո, ըմբշամարտ, ձեռնամարտ և նմանատիպ այլ սպորտաձևեր:
- 12.1.9.3 պարաշյուտիզմ, սավառնարվեստ, զիպլայն, փաուերբոկինգ, սքեյթբորդ, ջրասուզում (անկախ սուզման խորությունից), սքայսերֆինգ, ջրային դահուկ, սնորքելինգ, բլոբբինգ, զորբինգ, դայվինգ (ներառյալ ֆրի դայվինգ), ձիավարություն, ձիասպորտ, փորձնական հեծանվավազք, արագ-ընթաց վայրէջք կամ լեռնային ձիավարություն (ձիարշավ), ամերիկյան ֆուտբոլ, ռեգբի, բանջիջամփինգ, բեյսբոլ, գեղասահք, ցանկացած տեսակի չմշկասպորտ, էքստրեմալ հեծանվավազք (ներառյալ՝ դյորթջամփինգ և այլն), տափօղակով հոկեյ, ձեռքի գնդակ, դահուկասպորտ, մոտոբոլ, սքայդայվինգ, պարկուր, ռաֆթինգ, հոլովակասպորտ, ձմեռային լող:
- 12.1.9.4 մոտորանավակներով, կատամարաններով, լաստանավերով և փոքր նավակներով նավավարություն, յախտինգ, մոպեդների, մոտոբային սկուտերների, ձնագնացների, էլեկտրական սկուտերների, մոտոցիկլետների, կվադրոցիկլերի կամ այլ երկանիվ կամ եռանիվ շարժիչով տրանսպորտային միջոցների վարում, ցանկացած տեսակի մոտոկրոսի և ավտոսպորտի մասնակցություն, ուժային տրիաթլոն:
- 12.1.10 Չնշված այլ վտանգավոր և/կամ էքստրեմալ սպորտաձևեր, որոնք ներառում են ռիսկի բարձր աստիճան, արագություն, բարձրություն, ֆիզիկական ակտիվության բարձր մակարդակ և/կամ բարձր մասնագիտացված սարքավորումներ:
- 12.1.11 Պատահարն առաջացել է Ապահովագրված անձի առողջության վատթարացման, գիտակցության կամ մտավոր խանգարումների հետևանքով:
- 12.1.12 Պատահարն առաջացել է Ապահովագրված անձի կողմից ինքնասպանության (ինքնասպանության փորձի) կամ կանխամտածված անդամախեղության կամ անդամախեղության փորձի կամ Ապահովագրված անձի անմեղսունակ լինելու հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը հասցվել է այդպիսի իրավիճակի այլ անձի կողմից:
- 12.1.13 Պատահարը հետևանք է Ապահովագրված անձի հղիության կամ ծննդաբերության:
- 12.2 Եթե Պայմանագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովագրական պատահար չեն հանդիսանում նաև ներքոնշյալ գործողությունների հետևանքով առաջացած իրադարձությունները՝

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱԲԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 25/31	

- 12.2.1 Ապահովագրի (Ապահովագրված անձի)՝ սեփական կյանքը և առողջությունը վերջինիս սովորական կենսագործունեության համեմատ չհիմնավորված բարձր ռիսկի ենթարկելու գծով միտումնավոր փորձը, բացառությամբ՝ այլ մարդու կյանքը փրկելու դեպքերի:
- 12.2.2 Ապահովագրված անձի կողմից վարորդական իրավունքի վկայականի բացակայության պայմաններում կամ ալկոհոլի, թմրանյութերի, տոքսիկ նյութերի և ցանկացած այլ տեսակի հոգեմետ միջոցների ազդեցության ներքո ցանկացած տրանսպորտային միջոց վարելու կամ տրանսպորտային միջոցի շահագործման կանոնների կամ երթևեկության կանոնների (այդ թվում ճանապարհային երթևեկության կանոնների) խախտման արդյունքում տեղի ունեցած պատահարը:
- 12.2.3 Ցանկացած տրանսպորտային միջոց այլ անձի կողմից կառավարվելու ընթացքում առաջացած պատահարը այն դեպքում, երբ Ապահովագրված անձը նախօրոք տեղեկացված է եղել, որ վարորդը և/կամ մեքենավարը չի ունեցել վարելու իրավունք կամ զրկված է եղել այդ իրավունքից և/կամ գտնվել է ալկոհոլի, թմրանյութերի, տոքսիկ նյութերի և ցանկացած այլ տեսակի հոգեմետ միջոցների ազդեցության ներքո:
- 12.2.4 Ապահովագրված անձի կողմից որպես օդաչու իրականացված թռիչքը ցանկացած տեսակի թռչող սարքով:
- 12.2.5 Բժշկական ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած Դժբախտ պատահարը:
- 12.2.6 Ապահովագրված անձի՝ ալկոհոլով (ալկոհոլ պարունակող նյութերով), թմրանյութերով, տոքսիկ նյութերով և ցանկացած այլ տեսակի հոգեմետ միջոցներով թունավորումը:
- 12.3 Ապահովագրողն ազատվում է Դժբախտ պատահարի հետևանքով մատուցված բժշկական ծառայության արդյունքում առաջացած լրացուցիչ բժշկական ծախսերի, ժամանակավոր անաշխատունակության, մարմնական վնասվածքի, հաշմանդամության կամ մահվան համար հատուցում վճարելուց:

13 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

- 13.1 Ապահովագրողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝
- 13.1.1 Շահառուի կողմից չեն ներկայացվել կամ թերի են ներկայացվել հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը:
- 13.1.2 Ապահովագրված անձը կամ Ապահովագրի պատահարի, իր նախաձեռնած գործողությունների և/կամ իր կողմից անձամբ կրած ծախսերի մասին Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով չի տեղեկացրել Ապահովագրողին:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 26/31	

- 13.1.3 Պայմանագիրը կնքելուց հետո պարզվել է, որ Ապահովագրված անձը ընդգրկված է 2.1.12 կետով նշված խմբերից որևէ մեկում:
- 13.1.4 Պայմանագիրը կնքելիս և/կամ դրա գործողության ընթացքում Ապահովագրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից Ապահովագրողին տրամադրվել են կեղծ, ապակողմնորոշիչ, իրականությանը չհամապատասխանող կամ ոչ ամբողջական տեղեկություններ և/կամ ապացույցներ Ապահովագրված անձի և/կամ Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ, ներկայացվել են բժշկական փաստաթղթեր, որտեղ զետեղված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, կեղծ կամ թերի է (ներառյալ՝ սխալ կամ ոչ ճիշտ հաշմանդամության կարգի սահմանումը) կամ Ապահովագրողին է ներկայացվել ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր:
- 13.1.5 Ապահովագրված անձի (Ապահովագրի, Շահառուի) կողմից իրականացվել են դիտավորյալ գործողություններ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են Ապահովագրական պատահարի տեղի ունենալուն կամ պատճառված վնասի չափի մեծանալուն:
- 13.1.6 Ապահովագրական պատահար տեղի ունենալու պահի դրությամբ Ապահովագիրն Ապահովագրողի նկատմամբ ունի Ապահովագրավճարի գծով ժամկետանց պարտավորություններ:
- 13.1.7 Շահառուն ներկայացրել է Ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած վնասի հատուցման պահանջ:
- 13.1.8 Ապահովագրված անձն առանց լիցենզիա և/կամ թույլտվություն և/կամ որակավորում ունենալու զբաղվել է համապատասխան լիցենզիա և/կամ թույլտվություն և/կամ որակավորում պահանջող գործունեությամբ, որն ուղղակիորեն հանգեցրել է Պատահարի, կամ Պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից հակաօրինական գործողություններ կատարելու, տարբեր տեսակի փորձարկումներին մասնակցելու ժամանակ կամ հետևանքով:
- 13.1.9 Ապահովագրված անձն ամբողջությամբ կամ մասնակիորեն չի պահպանել կամ խախտել է համապատասխան գործունեության համար ՀՀ օրենսդրությամբ և/կամ իր գործատուի և/կամ ընդհանուր սահմանված աշխատանքային և/կամ տեխնիկական անվտանգության նորմերը և/կամ կանոնները և/կամ ստանդարտները, որոնք ուղղակիորեն հանգեցրել են Պատահարի: Եթե Ապահովագրված անձն իրականացնում է աշխատանքային գործունեություն այլ երկրում, ապա կիրառելի են այդ երկրի օրենսդրությամբ սահմանված պահանջները:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 27/31	

- 13.1.10 Ռիսկը առաջացել է Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո, բացառությամբ Պայմանների 4.7-4.9 կետերով նախատեսված դեպքերի:
- 13.1.11 Պատահարը տեղի է ունեցել պարտադիր կամ կամավոր հիմունքներով պաշտպանական կամ փրկարարական գործողություններում (ցանկացած տեսակի պատերազմ, զորահավաք, զորավարժություն, զորաշարժ, աշխարհազոր, այլ ռազմական գործողություն, բանակում պարտադիր կամ ժամկետային զինվորական ծառայություն, փրկարարական և/կամ հրդեհամարման աշխատանքներ և նմանատիպ այլ գործողություններ) Ապահովագրված անձի մասնակցելու ժամանակ և/կամ հետևանքով/պատճառով:
- 13.1.12 Պատահարը տեղի է ունեցել ազատագրկման վայրերում, ինչպես նաև ժամանակավոր պահման վայրերում և հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց կալանավորման համար նախատեսված այլ հաստատություններում Ապահովագրված անձի գտնվելու ժամանակ:
- 13.1.13 Ապահովագրված անձի մոտ տեղի է ունեցել առողջության վատթարացում, որը հետևանք է բուժման կամ վիրահատական միջամտությունների:
- 13.1.14 Բժշկական ծախսերի գծով ներկայացված փաստաթղթերում բժշկական ցուցումը հիմնավորված չէ կամ բժշկական ցուցումն ընդհանրապես բացակայում է:
- 13.2 Պայմաններով չեն հատուցվում նաև ստորև նշված բժշկական ծախսերը՝
- 13.2.1 ցանկացած տեսակի սննդի, սննդային և/կամ կենսաբանական ակտիվ հավելումների (վիտամիններ և այլն), կոսմետիկ կամ հիգիենայի կամ խնամքի պարագաների կամ հանքային աղերի, դեղորայքի, բժշկական պարագաների ձեռքբերման ծախսերը,
- 13.2.2 ՀՀ օրենսդրության համաձայն՝ պետության կողմից երաշխավորվող անվճար հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային բժշկական օգնության կամ սպասարկման ծառայությունների ցանկում ընդգրկված ախտորոշումների, բժշկական ծառայությունների, դեղորայքի հետ կապված ծախսերը,
- 13.2.3 ֆիզիոթերապևտիկ, վերականգնողական, սանատոր-առողջարանային միջոցառումների կամ բուժման հետ կապված ծախսերը,
- 13.2.4 այնպիսի բժշկական ծառայություններից օգտվելու հետ կապված ծախսերը, որոնք կատարվել են Ապահովագրված անձի մոտ մինչև Դժբախտ պատահարի տեղի ունենալն առկա հիվանդությունների սրացումների կամ բարդացումների, դրանց բուժման և/կամ կանխարգելման գծով կամ ուղղակիորեն կապված չեն տեղի ունեցած Դժբախտ պատահարի հետ,
- 13.2.5 ծախսերը՝ կապված Բժշկական հաստատություն չհամարվող անձանց կողմից ծառայությունների մատուցման հետ,

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կողմ /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 28/31	

- 13.2.6 ոչ ավանդական, այլընտրանքային (ոչ գիտական) բուժման և ախտորոշման մեթոդների՝ ասեղնաբուժության, հոմեոպաթիայի, Ֆոլիի մեթոդով ախտորոշման, բիոռեզոնանսային ախտորոշման և այլնի, փորձարարական կամ հետազոտական մեթոդներով բուժման, կազդուրման ավանդական համակարգերի, հեռաբժշկության հետ կապված ծառայությունների գծով ծախսերը:
- 13.3 Ապահովագրողը մերժում է նաև Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած առողջական խնդիրները բուժելու ընթացքում Ապահովագրված անձի կողմից բավարար հետևողականություն չցուցաբերելու, բուժող բժշկի ցուցումներին չհետևելու կամ ոչ պատշաճ հետևելու, բուժումից հրաժարվելու կամ բուժումն ուղացնելու, ինչպես նաև ինքնաբուժությամբ զբաղվելու և/կամ բժշկի կողմից չնշանակված կամ նշանակվածից ավել կամ պակաս դեղորայք օգտագործելու հետևանքով նոր բժշկական ծախսերի, մարմնական վնասվածքների, ժամանակավոր անաշխատունակության, հաշմանդամության, մահվան առաջացման հետ կապված հնարավոր վնասների հատուցումը:
- 13.4 Ապահովագրողն իրավունք ունի մերժել հատուցման վճարումը Պայմանագրով և Պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

14 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 14.1 Ապահովագրական հատուցման գծով Ընկերությանը ներկայացված արտարժույթով ծախսերը Շահառուին հատուցվում են տվյալ արտարժույթին համարժեք ՀՀ դրամի սահմաններում, որը հաշվարկվում է Ապահովագրական հատուցման որոշման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
- 14.2 Եթե Շահառուի կողմից հատուցում ստանալու համար ներկայացված փաստաթղթերը օտար լեզվով են, ապա դրանց պետք է կցված լինեն որակավորված թարգմանչի կողմից կատարված թարգմանությունները, Ապահովագրողի պահանջով՝ նաև դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:
- 14.3 Ապահովագրողը գրավոր ձևով Ապահովադիրին և/կամ Ապահովագրված անձին և/կամ Շահառուին կարող է ազատել Պայմաններով սահմանված որոշակի փաստաթղթերի ներկայացման կամ որոշակի գործողությունների իրականացման պարտականությունից:
- 14.4 Պայմաններով սահմանված օրերը համարվում են օրացուցային օրեր՝ բացառությամբ, երբ Պայմանների կոնկրետ դրույթում նշված է աշխատանքային օր:
- 14.5 Հայաստանի Հանրապետության տարածքի հասկացությունը սահմանվում է «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 29/31	

- 14.6 Պայմանների իմաստով Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները, որոշումները և գրությունները (այսուհետ միասին՝ Ծանուցում) համարվում են պատշաճ ծանուցված (առաքված), եթե կատարվել են հետևյալ եղանակներից որևէ մեկով.
- 14.6.1 Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված հասցեով:
- 14.6.2 Ծանուցումը ուղարկվել է բջջային հաղորդագրությամբ՝ Պայմանագրում կամ Ապահովադրի (Ապահովագրված անձի (ներառյալ լիազորված անձի կամ իրավահաջորդի), Շահառուի) կողմից տրամադրված այլ փաստաթղթի մեջ (հայցային դիմում, հայտարարություն և այլն) նշված հեռախոսահամարին:
- 14.6.3 Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեով:
- 14.7 Վերոնշյալ հասցեների և/կամ Պայմանագրում նշված կողմերի տվյալների (հասցե, հեռախոսահամար, բանկային տվյալներ և այլն) փոփոխության դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողը չի տեղեկացվել հիշյալ փոփոխությունների մասին, ապա Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) բոլոր Ծանուցումները ուղարկվում են նրա վերջին հայտնի հասցեով և համարվում են պատշաճ առաքված (հանձնված), իսկ Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն)՝ պատշաճ ծանուցված, անկախ փաստացի ծանուցված լինելու հանգամանքից: Նման դեպքում Ծանուցման սկիզբ է համարվում դրա ելքի ամսաթիվը:
- 14.8 Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերը կարող են երկկողմանի համաձայնագիր կնքելու միջոցով փոփոխել և/կամ լրացնել Պայմանագրի դրույթները, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
- 14.9 Պայմանագրից և Պայմաններից ծագող բոլոր տարաձայնությունները ենթակա են լուծման Պայմանագրում նշված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 14.10 Պայմանագրից և Պայմաններից բխող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
- 14.11 Պայմանագրի և Պայմանների դրույթների միջև անհամապատասխանություն լինելու դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրին:
- 14.12 Պայմանների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

15 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 15.1 Կողմերն ազատվում են Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու պատասխանատվությունից,

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ		Կող /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
			S – 1.0	11.11.2022
			Էջ 30/31	

Եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել, և այն անմիջականորեն հանգեցրել է պայմանագրային պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարման անհնարինությանը: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

15.2 Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին մյուս Կողմին առնվազն 15 օր առաջ տեղյակ պահելով:

15.3 Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա անհաղթահարելի ուժի ազդեցությունը պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանը խոչնդոտում է նման ազդեցությունը:

16 ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

16.1 Պայմանագրի շրջանակներում կամ դրա կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունները սկսվելու օրվանից մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 1

«Մահ Դժբախտ պատահարի հետևանքով» հատուցումների աղյուսակ

Ռիսկ	Ապահովագրական հատուցման չափը (% ապահովագրական գումարից)
Մահ Դժբախտ պատահարի հետևանքով	100

Հավելված 2.1

«Հաշմանդամություն Դժբախտ պատահարի հետևանքով» հատուցումների աղյուսակ – Տարբերակ 1

 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ	Կողմ /09-ՊՄ22-002/«ՀՐՊ»	
		S – 1.0	11.11.2022
		Էջ 31/31	

Հաշմանդամության կարգը (խումբը)	Ապահովագրական հատուցման չափը (% ապահովագրական գումարից)
I (առաջին) խմբի հաշմանդամություն	100
II (երկրորդ) խմբի հաշմանդամություն	50
III (երրորդ) խմբի հաշմանդամություն	25

Հավելված 2.2

«Հաշմանդամություն Դժբախտ պատահարի հետևանքով» հատուցումների աղյուսակ – Տարբերակ 2

Հաշմանդամության կարգը (խումբը)	Ապահովագրական հատուցման չափը (% ապահովագրական գումարից)
I (առաջին) խմբի հաշմանդամություն	100
II (երկրորդ) խմբի հաշմանդամություն	50

Հավելված 3

«Մարմնական վնասվածքներ Դժբախտ պատահարի հետևանքով» հատուցումների աղյուսակ

Հավելված 3-ը հանրամատչելի փաստաթուղթ չէ, այն տրամադրվում է ըստ պահանջի: